Արձանագրություն N 2
ՀԱՊՀ-ՄԾՁԲ-17/1 ծածկագրով մրցութային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի
(Անվտանգություն և պահնորդական ծառայություն)

ք.Երևան 16 դեկտեմբեր 2016թ.,
Ժամը՝ 11:00

Նիստին ներկա էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Նազարեթյանը
հանձնաժողովի անդամներ՝, Ն.Այվազյանը, Ա. Կարապետյանը, Լ.Ավետիսյանը
քարտուղար՝ Ռ Մեհրաբյանը

1. Գնային առաջարկների բացման մասին

(Ա.Նազարեթյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

N	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների հասցեները, և կոնտակտային տվյալները
1	Պանտերա Սեքյուրիթի ՍՊԸ	Հասցե՝ ք. Երևան, Թումանյան 2-րդ փող, 1-ին տուն, 2-րդ բն Հեռ.53-78-50 Էլ. փոստ՝ office@pantera.am
2	Լեգիոն Ե.Ս.Է ՍՊԸ	Հասցե՝ ք. Երևան, Զ.Սարկավագի 126/1, բն 38 Հեռ. 53-55-74 Էլ. փոստ՝ legionkadrer@mail.ru
3	Ար-Մոբիլ ՓԲԸ	Հասցե՝ ք. Երևան, Արաբկիր 49փ, թիվ 1տ Հեռ.20-02-65 Էլ. փոստ՝ info@armobil.am, law@armobil.am
4	ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն	Հասցե՝ ք. Երևան, Քանաքեռ 14փ. 1շ. Հեռ.094-10-67-76 Էլ. փոստ՝ ppgv_gnumner@mail.ru

բ) Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են

Չափաբաժնի համարը	Անվանումը	Նախահաշվային գումար	Պանտեռա Սիքյուրիթի ՍՊԸ	Լեգիոն ՍՊԸ	Ար-Մոբիլ ՓԲԸ	ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն
			առանց ԱԱՀ-ի	առանց ԱԱՀ-ի	առանց ԱԱՀ-ի	Չի հանդիսանում ԱԱՀ վճարող
1	Անվտանգություն և պահնորդական ծառայություն	149 910 900	152 500 000	148 140 000	148 500 000	138 996 000

2. Ընթացակարգի հայտի գնահատման մասին

(Ա.Նազարեթյան)

2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը (գնային առաջարկները) համապատասխանում են ՀԱՊՀ-ՄԾՁԲ-17/1 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին:

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությանբ՝

- **Լեգիոն Ե.Ս.Է ՍՊԸ-ի և Պանտերա Սեքյուրիթի ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաթեթներում բացակայում էին մասնագիտական փորձառությունը հավաստող նմանատիպ կատարված պայմանագրի (պայմանագրերի) պատճենները իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:
- **ՀՀ Ոստիկանության պետական պահպանության վարչության** կողմից ներկայացված մասնագիտական փորձառությունը հավաստող նմանատիպ կատարված պայմանգրերը թերի են, քանի որ դրանց շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս է տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, ինչպես նաև բացակայում են սահմանված ժամկետում պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

<u>Հանձնաժողովը որոշեց՝</u>

Հիմք ընդունելով ՀԱՊՀ-ՄԾՁԲ-17/1 ծածկագրով հրավերի 7.2 կետը <*Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը*> կասեցնել նիստը, Լեգիոն Ե.Ս.Է ՍՊԸ-ին, Պանտերա Սեքյուրիթի ՍՊԸ-ին և ՀՀ Ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանը առաջարկել մինչև 2016թ-ի դեկտեմբերի 19-ի ժամը 17.30-ը շտկել անհամապատասխանությունը:

Գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել, 2016թ-ի դեկտեմբերի 20-ին ժամը 11.00:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0: